

Վարկային գծեր (օվերդրաֆտներ)

Անվանում	վարկային գիծ “Հիմնավորված եկամուտով” գործիքի տեղեկատվական ամփոփագիր
Տեսակ	վարկային գծեր (օվերդրաֆտներ)
Նպատակ	բոլոր նպատակների համար
Գումարի չափ/միջակայք	Վարկի նվազագույն գումար – 300,000 ՀՀ դրամ Վարկի առավելագույն գումար – 5,150,000 ՀՀ դրամ
Ժամկետ	60 ամիս
Արժույթ	ՀՀ դրամ
Վարկի անվանական տոկոսադրույք ¹	16.9%
Վարկի փաստացի տոկոսադրույք	18.27%
Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում	չի սահմանվում
Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք	Քարտի տարեկան սպասարկում - անվճար
Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ	չի սահմանվում
Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները	- ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ - բացասական վարկային պատմության առկայություն - տարիք՝ մինչև 21 տ և 65 տ-ից բարձր - գրանցված եկամտի բացակայություն
Մարումների հաճախականություն	Ամսական
Արտոնյալ ժամկետ («գրեյս պերիոդ»)	չի սահմանվում
Մարումների եղանակ	- Քաղվածքի գեներացման օրվա դրությամբ վարկային գծի բացասական մնացորդի նվազագույնը 5%-ի չափով դրամական միջոցների մուտք մինչև ամսվա վերջին օրը (դրական շրջանառության ապահովում), տոկոսագումարները վճարվում են ամեն ամիս, հիմնական գումարի մարումը ժամկետի վերջում - ամսական հավասարաչափ մարումներով
Փաստացի օգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը, տոկոսագումարների հաշվարկման կարգը և հաշվի նվազագույն շարժը	- Վարկի փաստացի տոկոսադրույք 18.27%, - հաշվի նվազագույն շարժը 5%(ամսական շրջանառությամբ ընտրելու դեպքում) - Վարկի փաստացի տոկոսադրույք հաշվելու բանաձև¹ $A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$

¹ որտեղ i – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, A – սպառողին տրամադրվող վարկի գումար, n – սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համար, N – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի համար, K_n – սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական n -րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ), D_n – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել կրեդիտի ստացման օրից մինչև կրեդիտի գումարի հերթական n -րդ մարման օրը ներառյալ

	Վարկի փաստացի տոկոսադրույք հաշվելու օրինակ՝ Վարկի արժույթ՝ ՀՀ դրամ Վարկի գումար՝ 500,000 Տևողություն՝ 60 ամիս Վարկային գծի օգտագործում՝ կանխիկացմամբ Վարկի օգտագործման օր՝ 05/09/2019 Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 16.9% Պարտադիր հետվճարի չափ՝ 5% Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 18.27%
Ապահովության (գրավի) տեսակ	չի սահմանվում
«Վարկ հարաբերած գրավի արժեք»	չի սահմանվում
Ապահովագրության պահանջի առկայություն	չի սահմանվում
Տոկոս չօգտագործված միջոցների դիմաց (առկայության դեպքում)	0%
Նվազագույն կանխավճար /արժեք	չի սահմանվում
Տույժերի կիրառման դեպքերը և չափը	պարտադիր մուտքագրվող գումարը չմուտքագրելու դեպքում տույժ՝ չմուտքագրված նվազագույն գումարի 4%-ի չափով
Վարկի գումարի տրամադրման եղանակներ	անկանխիկ՝ գումարը քարտին փոխանցման միջոցով
Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները	առանց սահմանափակումների
Վարկի ձևակերպման վայր	Բանկի մասնաճյուղեր և Գլխամասային գրասենյակի սպասարկման սրահ
Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ	մինչև 1 աշխատանքային օր
Վարկը սպառողի տրամադրելու կարգ և ժամկետ	անկանխիկ մինչև 1 աշխատանքային օր
Դրական որոշման գործոններ	- ՀՀ ռեզիդենտ Ֆիզիկական անձ - դրական վարկային պատմություն - կայուն եկամուտներ - տարիք՝ 21տ - 65տ
Բացասական որոշման գործոններ	- ՀՀ ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձ - բացասական վարկային պատմության առկայություն - եկամուտների բացակայություն - տարիք՝ մինչև 21տ և 65տ-ից բարձր
Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	- դիմում, անձնագիր, սոց. Քարտ, Եկամուտները հաստատող փաստաթուղթ (բացառությամբ Յունբանկ ԲԲԸ հետ աշխատավարձային նախագիծ ունեցող հաճախորդների)